# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

*Քաղաքային «Կումայրի» թերթի հավելված,* *1991 թ. Մայիս, № 25:* Գինը՝ 50 կոպ.





Փրկություն և հաց... Լուսանկարը՝ Ս. Գուլյանի

## ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ԿԿԱՌՈՒՑԵՆ

Երևանում ստորագրվեց արձանագրություն, որի համաձայն իտալական «Էնի» կոնցեռնը Լենինական քաղաքում կկառուցի պոլիկլինիկա՝ օրական 600 այցելու ընդունելու կարողությամբ: Դա իտալական կոնցեռնի՝ անհատույց նվերը կլինի լենինականցիներին:

«Էնի» կոնցեռնի միջազգային հարաբերությունների վարչության բաժնի պետի տեղակալ Ադրիանա Սալվանին ասաց. Մեր կոնցեռնը որոշեց Լենինականում կառուցել մի պոլիկլինիկա, որը կահավորված կլինի ամենաարդիական բժշկական սարքավորումներով: Դրա շինարարությունը կոնցեռնի ղեկավարությունը հանձնարարել է մեր միավորման մեջ մտնող «Ինտո» ֆիրմային, որը նման շինարարության հարուստ փորձ ունի:

Իտալացի շինարարները, իսկ դրանք կլինեն շուրջ 50-70 հոգի, պարտավորվել են պոլիկլինիկան շահագործման հանձնել մեկ տարում:

(ԱՐՄԵՆՊՐԵՍ)







Ասում են ճակատագիր չկա, նախազգացում չկա... Դե եկ ու 31-ամյա Նոյեմի ծնողներին, հարազատներին բաժին հասած ողբերգությունից հետո մտածիր նույնը: Չես կարող, ՆՈՅԵՄ ԾԱՎԱՌԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ կյանքի ոչ մեկ, ոչ երկու, այլ երևի բոլոր կարևոր դրվագներն իրենց դաշտը ճակատագրականությամբ քեզ հակառակը կապացուցեն ու դու... պարզապես կըլնես՝ ներսումդ խլացնելով հարցի ու բողոքի այն ճիչը, թե՝ դաժան, այսքա՞ն էլ դաժան, անողորմ... Այո, մի՞թե ճակատագիրը այդքա՞ն դաժան ու անողորմ կարող է գտնվել մի մարդու նկատմամբ, նրան վերցնել իր չար աչքի ուղիղ նշանառության տակ...

Նոյեմը (ծնված 1957 թ. հունիսի 8-ին, Լենինականում), Հակոբ Հակոբյանի անվան (№ 7) միջնակարգ դպրոցը 1974 ավարտեց գերազանցությամբ: Միջահասակ էր Նոյեմը, շագանակագույն աչքերով, վարսերը՝ մեղմ շիկավուն: Արտառոց աշխատասեր էր, ժպտերես ու ծիծաղկոտ, հյուրասեր և ընկերասեր: Անչափ սիրում էր երգն ու երաժշտությունը:

Ուզում էր նվիրվել աշխարհի ամենամարդասիրական աշխատանքին՝ բժիշկ դառնալ: Նոյեմը ուզում էր դառնալ լավ բժիշկ, իսկական բժիշկ, գիտելիք ունեցող բժիշկ, որոնք մարդկանց սխալ չեն ախտորոշում և խլում են անգամ մահվան ճիրաններից... Իրեն, ավա՜ղ, չկարողացան. ճակատագիրը դրա ճիշտ հակառակ սցենարն էր հորինել Նոյեմի համար:

Նոյեմը 1977 թ. ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտի նախապատրաստական բաժին: Հաջորդ տարի նա արդեն սննդի արդյունաբերության տեխնոլոգիա բաժնի ուսանողուհի էր: Հինգ տարի ուսանելուց հետո, իր շայր համակուրսեցիների հետ, աշխատանքի անցավ Գերցենի փողոցի հարևանությամբ գտնըվող նորակառույց սննդի կոմբինատում, լաբորանտ էր աշխատում:

Ամուսնանալու էր Նոյեմը... Վերջին ամսի ընթացքում շատ տխուր էր: Հարցրել էին հարազատները՝ չե՞ս ուզում տըղային: «Չէ, դա չէ պատճառը, տխուր եմ»,— պատասխանել էր խուսափողաբար, իսկ գործընկերներից ոմանց ասել էր. «Ինձ թվում է, թե ես իմ ուրախության օրը չեմ հասնի, ինձ հետ մի վատ բան կլինի»:

Նշանադրության հանդեսը նախատեսել էին դեկտեմբերի 8-ին: Խառն էր իրադրությունը Հայաստանում, հարազատները մտածեցին ժողովրդի սըրտի հետ գնալ, հետաձգեցին՝ 10-ին, սակայն, քանի որ հուզումները շարունակվում էին, մինչ աղետը նորից փոխեցին ժամանակը և որոշեցին բըստույգ օրը՝ դեկտեմբերի 17, ժամը 16.00-ին:

Բացվեց դեկտեմբերի 7-ի մառախլապատ առավոտը, ինչ պես ամենակոպ հրեշի երախ՝ դաժա՜ն-դաժա՜ն... Մայրը, իբրև ականատես, պատմում է, որ այդ օրը Նոյեմը տանից դուրս գալուց առաջ հետ է դարձել, հրաժեշտ տըվողի հայացքով նայել տանը:

Աղետ տարերքը վրա հասավ, երբ նա սննդի կոմբինատի երկհարկանի շենքի 2-րդ հարկում էր: Անունն էլ՝ նորակառույց էր: Նորակառույց էր, բայց կառույցի հեղինակները չէին ունեցել ամենակարևորը՝ խիղճ... Շենքը թափով երերաց և ամեն ինչ կորավ փոշու ու փլվածքների տակ:

Նոյե՛մ, Նոյե՛մ նրա փլված աշխատատեղի մոտ գոռում էին հարազատները: Աղետից 3-4 ժամ հետո գտան Նոյեմին, աղջիկը խուլ արձագանքեց:

Մոտ 15 բժիշկներ շրջապատեցին Նոյեմին, մեքենայի մոտ զննեցին, ապա տարան ռենտգեն ստուգման: Կոտրըվածք չուներ: Բժիշկները հավաստիացրին, որ ներքին օրգաններից արյունահոսություն էլ չունի, մինչդեռ...

Դեկտեմբերի 13-ին, ժամը 18-ին սկսվեց վիրահատությունը: Հայ բժիշկները դուրս եկան վիրահատարանից և տեղեկացրին, որ վիճակն անհույս է:

Դեկտեմբերի 17-ին, ժամը 16-ին հարազատները հրաժեշտ էին տալիս սիրելի Նոյեմին: Վշտի, աղետի հետևանք հանդիսացող համընդհանուր շոկի մեջ չէին նըկատել, որ ճակատագրի չար զուգադիպությամբ հուղարկավորության օրն ու ժամը համընկել են նշանադրության հան դեսի օրվան ու ժամին, որը հարազատներին, բարեկամներին ու ընկերներին նախապես բաժանված հրավիրատոմսերում էր նշված: Մի հարցում միայն Նոյեմի «բախտը բերեց». Լենինականում այդ օրերին ծաղիկ չէր նարվում, բայց Նոյեմի հարազատները, որոնք նրա նշանադրության հանդեսին պետք է գային, ծաղիկներ բերեցին Երևանից:

Դաժան աղետից անցել է մոտ երեք տարի, հարազատները, անգամ նշանածը՝ Օնթան, ոչ մի կերպ չեն կարողանում խլացնել իրենց վիշտը, որը կարծես չսպիացող վերք լինի, արնակարմիր ու երբեք-երբեք չթառամող ծաղիկ...

Ա. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ



ՎԱԶԳԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Ծնվել էր 1981 թ., Լենինականում: Իր սև մազերով և հմայիչ սև աչքերով Վազգենը հրապուրում էր ամեն մի մարդու: Շատ էր սիրում իր պապիկին, որի անունն էր կրում: Սովորում էր 9-րդ դպրոցի 1-ին դասարանում: Երկրաշարժից մեկ օր առաջ մայրիկի հետ ծաղիկներ գնեց, որ գնար պապիկի գերեզմանին այցելության: Հաջորդ օրը առավոտյան արթնանալուն պես նայեց ծաղիկներին և գնաց դպրոց... գնաց և տուն չվերադարձավ... Կուլ գնաց չարագույժ աղետին, իր հետ տանելով պապի համար գնած ծաղիկները:*



«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ԿՈՒՄԱՅՐԻԻ ՔԱՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՄԱՅԻՍՅԱՆ Փ. 47
ՊԱՏՎԵՐ՝ 1109